

Ա. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

ԱՐՄՈՐԵԱՑ ԼՈՒՐԵՐ

● 3 Մայիս Դշ. — Յետմիջօրէի, ժամը 5-ին, ի զիմաց Գեր. Տեղապահ Հօր՝ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեան ընկերակցութեամբ՝ Հոգ. Տ. Միւռուն Վրդ. Կըճիկեանի, Ներկայ դատուեցաւ Միջ. Կարմիր Խաչի Վարչութեան կողմէ տրուած Հրամեշտի թէյասեղանին, Համբարձման լերան «Օքսոտ Վիդիթորիա» հիւանդանոցի մէջ:

● 5 Մայիս Ուրբ. — Յետմիջօրէի, ժամը 4-ին, Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեան ընկերակցութեամբ Տիար Կարպիս Հինդիկանի, Ներկայ դատուեցաւ տեղայոց Ֆրանսուական Հողի. Հիւպատոսի կողմէ տրուած թէյասեղանին, ի պատիւ Լատինաց Ալմենապատիւ Պատրիարքին, Ա. Աննայի վանքին մէջ:

● 7 Մայիս Կիր. — Տօն Երևան Ա. Խաչին. Ա. Պատարազը մատուցուեցաւ Ա. Յակոբանց Մայր Տաճարին մէջ, Պատարազին էր Հոգ. Տ. Գարեգին Արքղայ Գաղանճեան:

● 14 Մայիս Կիր. — Ա. Պատարազը մատուցուեցաւ Ա. Յարութեան Տաճարի մեր Վերնատան մատուռին մէջ, Պատարազին էր Հոգ. Տ. Յարութիւն Վրդ. Մուշեան:

● 17 Մայիս Դշ. — Յետմիջօրէի, ժամը 1-ին, հոգեշնորհ վարդապետ Հայրեր զլիհաւորութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեանի, Պաշտօնական զնացքով բարձրացան Համբարձման լեռը, ժամը 2-30-ին տեղի ունեցաւ Սրբատելոյն մեր հանգիստաւոր մուտքը, ապա ժամը 4-ին, երեկոյեան ժամերգութիւնը և վաղուան տօնին նախատօնակը, Խակ ժամը 7-ին, «Եկեղեցի, Հըսկումի» կարգերը ու ապա Համբարձման տօնի առաւօտեան ժամերգութիւնը, «ը տեւեց մինչեւ զիշերային ժամը 11։ Ժամերգութեանց կը նախագահէր Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեան Արքորդութեանց աւարտին՝ Միաբանութիւն և աշկերտութիւն վերաբարձան մայրավանք:

● 18 Մայիս Եշ. — Համբարձման Տեառն. առաւօտուն նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Ա. Արքեպոս. Մանասեանի, հոգեշնորհ վարդապետ Հայրեր Թափօրութեամբ բարձրացան Համբարձման լեռ։ Սրբատելոյն մուտքը եղաւ «Հրաշափառչի հանգիստաւութեամբ», ապա, Սրբավայրի գալթի հայապատկան վրանամատուան տակ մատուցուեցաւ հանգիստաւոր Ա. Պատարազը։ Պատարազին էր Գեր. Տ. Խուրէն Ա. Արքեպոս. Մանասեան։ Ճաշու Աւետարանէն եսք տեղի ունեցաւ Հայրապետական Աթոռոյ Սիսէն Ա. Էջմիածին փոխարքութեան տարեղարձին առթիւ։ Քարոզեց Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքականէն, «Համբարձաւ Աստուած օրհնութեամբ և Տէր մեր ձայնիւ փողոյց բնաբանով։ Ա. Պատարազին ետք, կատարուեցաւ Ալնդաս-

տան» Համբարձման Սրբատեղւոյն մէջ։ Ապա Գեր. Սրբազնը, Միաբանութիւն և ժողովուրդ վերադարձան, մայրավանք հանդիսական զնացքով։

● 20 Մայիս Եր. — Երեկոյեան ժամերգութիւնը և վաղուան տօնին նախատօնակը պաշտըցան Ա. Հրեշտակապետաց Եկեղեցւոյն մէջ, նախագահութեամբ Գեր. Տ. Խուրէն Ա. Արքեպոս. Մանասեանի:

● 21 Մայիս Կիր. — Երկրորդ Մայիսակարդ. առաւօտեան ժամերգութիւնն ու Ա. Պատարազը մատուցուեցան Ա. Հրեշտակապետաց Եկեղեցւոյն մէջ, Պատարազին էր Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքակամեան։

● 22 Մայիս Բշ. — Առաւօտեան ժամը 8-ին Գեր. Տ. Խուրէն Ա. Արքեպոս. Մանասեան մեկնեցաւ Ա. Աթոռէն զէպի Պաղտատ։

● 24 Մայիս Դշ. — Առաւօտեան ժամը 10-ին Հոգ. Տ. Խուրէն Վրդ. Քէմհաճեան ընկերակցութեամբ Աւագ Թարգման Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ալաննեանի և Արեւելեան Յորդանանի հոգեուրումիւր՝ Հոգ. Տ. Կորիւն Վրդ. Մանուէլեանի ներկայ գտնուեցան Ամմանի օդակայանին մէջ տըրւած «Բանակի Օր»-ուան հանդիսութեանց և զնուուրական տողանցքին, որուն կը նախագահէր Ն. Վ. Ապտալլա Թագաւորի։

— Նոյն օրը, կէսօրին, զարձեալ, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Տ. Հայրիկ Վրդ. Ալաննեանի և Կորիւն Վրդ. Մանուէլեանի ներկայ գտնուեցան հաշկերոյթի սեղանին մը, տրուած Պաշտպանութեան նախարարին կողմէ «Բանակի Օր»-ուան ասիթով, Ամմանի բանակատեղիին մէջ, նախագահութեամբ Ն. Վ. Ապտալլա Թագաւորի։

● 25 Մայիս Եշ. — Ն. Վ. Ապտալլա Թագաւորի գահակալութեան և երկրի անկախութեան տարեկարձներուն ասիթով, առաւօտեան ժամը 7-30-ին Գեր. Տ. Խուրէն Վրդ. Քէմհաճեան ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ալաննեանի արքունիք (Ամման) զացին շնորհաւորելու Նորին Վեհափառութիւնը։

● 27 Մայիս Եր. — Երեկոյեան ժամերգութիւնը և վաղուան տօնին նախատօնակը պաշտըցան Ա. Յակոբանց Մայր Տաճարին մէջ։ Պատարազեց Համբարձման մէջ, նախագահութեամբ Հոգ. Տ. Ս. Սուրէն Վրդ. Քէմհաճեանի։

● 28 Մայիս Կիր. — Հոգեպայտս. հանդիսաւոր Ա. Պատարազը մատուցուեցաւ Ա. Յակոբանց Մայր Տաճարին մէջ։ Պատարազեց և քարոզեց Հոգ. Տ. Ս. Սուրէն Վրդ. Քէմհաճեան, ընարան ունենալով տես ես աղաչեցից զշայր, և այլ միխթարիչ տացէ ծեղ. գի ընդ ճեղ բնակեցի ի յաւիտեան (Յովհ. Ժ. 16). — Յետ Ա. Պատարազի կատարուեցաւ հոգեհանգիստ Երանաշնորհ Տ. Կիրեղ Ա. Պատրիարքի հոգւոյ հանգրատեան համար. ապա պաշտօնական թափօրով Նոյն արարութեամբ կրկնուեցաւ հանգուցեալ և սիրելի պատրիարքին շիրմին Վրդ. Մայր Տաճարի գաւթին մէջ։

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.

Editor - Father Hagop Vartanian. Armenian Convent, Jerusalem.

Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

